ՀԱՅՑ ՇՐՋԱՓԱԿՄԱՆԸ

Տեղի ունեցավ Ադրբեջանական ԽՍՀ-ի անպատասխանատու անձանց կազմակերպած Հայկական ԽՍՀ-ի շրջափակման բարբարոսական գործողությունների պատճառած նյութական վնասի պարզման կառավարական հանձնաժողովի հերթական նիստը:

Հանձնաժողովը Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, հանրապետության պետպլանի նախագահ Մ. Մկրտչյանի նախագահությամբ քննության առավ 1989 թվականի երրորդ եռամսյակում շրջափակման հետևանքով Հայաստանի ժողովրդական տնտեսությանը պատճառված տնտեսական վնասի չափերին վերաբերող նյութեր:

Հանրապետական մինիստրությունների ու գերատեսչությունների, ինչպես նաև միութենական ենթակայության ձեռնարկությունների ու կազմակերպությունների ներկայացրած տվյալների համաձայն Ադրբեջանի կողմից Հայկական ԽՍՀ-ի տրանսպորտային ուղիների շրջափակման պատճառած անմիջական վնասը կազմել է 229 միլիոն ռուբլի: Այդ գումարից աշխատանքի հարկադրական պարապուրդների դիմաց աշխատավարձ է վճարվել 32,8 միլիոն ռուբլի, արտադրանքի թերամատակարարումների համար տուգանքներ՝ 42,1 միլիոն ռուբլի:

Միայն 1989 թվականի երրորդ եռամսյակում Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությանը պատճառված անուղղակի վնասը կազմել է 1,38 միլիարդ ռուբլի:

Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը 1989 թվականի երրորդ եռամսյակում հանրապետության ժողովրդական տնտեսության ճյուղերին հասցված տնտեսական վնասին վերաբերող նյութը ուղարկել է ԽՍՀՄ դատախազություն և Հայկական ԽՍՀ դատախազություն՝ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու և անմիջական վնասը փոխհատուցելու նպատակով քրեական գործ հարուցելու համար:

(Արմենպրես)